



ԽՈՐԱՑՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Նեյտրոնների «սերնդափոխություն» ասելով պետք է հասկանալ միջուկների բաժանում, որի ժամանակ հին «սերնդի» նեյտրոնները կլանվում են ուրանի միջուկներով և ծնում նոր նեյտրոններ: Որպեսզի շղթայական ռեակցիան զարգանա և ոչ թե մարի, ռեակցիայի պրոցեսում ծնվող նեյտրոնների թիվը ժամանակի ընթացքում պետք է աճի կամ առնվազն մնա նույն մակարդակին: Այս տեղից պարզ է դառնում, որ շղթայական ռեակցիայի ընթանալու անհրաժեշտ պայմանը կարելի է ներկայացնել հետևյալ առնչությամբ. $k \geq 1$: $k = 1$ դեպքում միջուկների բաժանմանը մասնակցող նեյտրոնների թիվը մնում է անփոփոխ և ռեակցիան դառնում է կայուն՝ սրացիոնար: Նման ռեակցիա իրականացվում է ատոմային էլեկտրակայաններում: Եթե բազմացման գործակիցը աննշան չափով մեկից մեծանում է, ռեակցիան դառնում է անկառավարելի և ակնթարթորեն տեղի է ունենում պայթյուն: Նման ռեակցիա իրականացվում է ատոմային ռումբում: